ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 12 » նոյեմբերի 2024թ. № 144-Ա

ՍԵՐՅՈԺԱ ՌԱՖԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ, ՏԻԳՐԱՆ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԵՎ ՀԵՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սերյոժա Ռաֆիկի Սարգսյանին, Տիգրան Սերյոժայի Սարգսյանին և Հերմինե Հարությունի Հարությունյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող «Մարզ Լոռի, համայնքի Սպիտակ Սպիտակ ք. Դ. Տեր-Սիմոնյան փողոց 3/4 բնակելի տուն» հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 06-006-0476-0020 կադաստրային ծածկագրով 0,04 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին կից Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ Սպիտակ ք. Դ. Տեր-Սիմոնյան փողոց, 3/5 հողամաս» հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 06-006-0476-0021 կադաստրային ծածկագրով 0,02396 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով սահմանված չափորոշիչներին և որպես առանձին գույքային միավոր հնարավոր չէ օտարել աճուրդային կարգով, հիմք ընդունելով Սերյոժա Ռաֆիկի Սարգսյանի դիմումը՝ Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Համաձայնություն տալ «Մարզ Լոռի, համայնքի Սպիտակ Սպիտակ ք. Դ. Տեր-Սիմոնյան փողոց 3/4 բնակելի տուն» հասցեում գտնվող՝ Սերյոժա Ռաֆիկի Սարգսյանին, Տիգրան Սերյոժայի Սարգսյանին և Հերմինե Հարությունի Հարությունյանին ընդհանուր

բաժնային սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության 06-006-0476-0020 կադաստրային ծածկագրով 0,04 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին կից, Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող «Մարզ Լոռի, համայնքի Սպիտակ Սպիտակ ք. Դ. Տեր-Սիմոնյան փողոց 3/4 բնակելի տուն» հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 06-006-0476-0021 կադաստրային ծածկագրով 0,02396 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքով օտարելուն:

2. Հողամասի ուղղակի վաճառքի գինը սահմանել հողամասի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնի չափով՝ 292 551,60 ՀՀ դրամ (1 քառակուսի մետրը 1221 ՀՀ դրամ):

ԿՈՂՄ (12)	ԴԵՄ (0)	ՁԵՌՆՊԱՀ (4)
ՔԱՋԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ		ԳԵՎՈՐԳ ՄԱՐԳԱՐՅԱՆ
ԱՐՏԱԿ ՄԱԹՈՍՅԱՆ		ՆՈՒՆԵ ԷՀՏԻԲԱՐՅԱՆ
ՀԱՅԿ ՍԻՍԱԿՅԱՆ		ԶԱԼԻԿՈ ՀԱՄԲԱՐՅԱՆ
ԱԼՎԱՐԴ ՀԱՄԲԱՐՅԱՆ		ՎԱՐԴՈՒՀԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ
ՌԱՖԱՅԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ		
ՎԱՐԱԶԴԱՏ ՄԽԻԹԱՐՅԱՆ		
ՍԱՄՎԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ		
ՍԱՐԳԻՍ ՓԻԼՈՅԱՆ		
ՎԱՉԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ		
ԱՆՆԱ ԱԼԹՈՒՆՅԱՆ		
ԿԱՐԵՆ ԳԱՍՈՅԱՆ		
ՆԱՐԻՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. նոյեմբերի 12
ք. Սպիտակ